Ք. Երևան 19.12.2024թ

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի
Գլխավոր քարտուղար՝
պարոն Արման Գևորգյանին
Քանան Ընդ Յան ՍՊԸ-ի տնօրեն
Վարդգես Քանանյանից
00522734

**Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Հարգելի պարոն Գևորգյան**

**Համաձայն ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/02-9 պայմանագրի, մենք պետք է մատակարարեինք 44, 45, 49, 53, 54, 55, 56, 57, 62, 63, 75, 87, *90, 103, 104* չափաբաժինները: Ցանկանում եմ հայտնել, որ մենք չենք մատակարարել 49, 55, 57, 87 չափաբաժինները հետևյալ պատճառներով.**

- **49 չափաբաժնի՝ գազօջախի, իրական արժեքը և նախահաշիվը չեն համապատասխանում շուկայական գնին:**

ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Չափսերը՝ 1475 x 850 x 860 մմ (ԵxԼxԲ) (±10%): Այրիչների քանակը - 6, այրիչների չափսը 295x417 մմ (ԵxԼ) (±10%), ունի մինչև 4 կՎտ հզորություն և ամուր ներկառուցված է վառարանի վերին մասի վրա: Այրիչները պատրաստված են չհղկված երկաթից, տաքացուցիչների քանակը յուրաքանչյուր այրիչում - 2, հարմար է տարբեր տարաների համար, ինչպիսիք են թավան, կաթսան և այլն: Այրիների աշխատանքային մակերեսի ջերմաստիճանը՝ 270˚C: Ջերմաստիճանի կառավարման և ջերմային պաշտպանության համակարգ: Կառավարման վահանակի վրա տեղադրված են 4 դիրքով անջատիչներ -6 հատ; Լարումը 380 Վ: Ջեռուցման առավելագույն հզորությունը՝ 18 կՎտ: Աշխատանքային մակերեսը և դիմային պանելը՝ չժանգոտվող պողպատից են: Արտաքին կողային պանելները ներկված պողպատից են: Ջեռոցի տակ պետք է լինի դարակ՝ հատակից 200մմ բարձրության վրա: Ոտքերի տակդիրները սարքավորված են կարգավորվող ոտնակներով: Կարգավորման միջակայքը՝ 150մմ: Հավաքածուն պարունակում է կողային աշխատանքային հատվածներ՝ չժանգոտվող պողպատից: Էլեկտրաէներգիայի կարգավորումը 7 դիրք ունեցող գլխիկներով: Սալօջախը ունի՝ - անկախ անվտանգության թերմոստատ յուրաքանչյուր այրիչի համարչժանգոտող պողպատից պատրաստման խցիկ, որը հեշտ է մաքրել և ունի ավելի բարձր հիգիենիկ չափանիշներ: - երեք մակարդակի ուղեցույցներ, որոնք ապահովում են աշխատելու տարբեր տարբերակներ: - 6 մմ հաստությամբ չուգունե հատակ՝ ավելի լավ կատարողականություն և ջերմության հավասարաչափ բաշխում ապահովելու համար: - շարժական դուռ հեշտ օգտագործման համար: - եզրք տարածք աջ կողմում, որն ունի դուռ: - ջրամեկուսիչ և պաշտպանականկոնտրոլ: - ծխնելույզի համար բարձր ջերմաստիճանից պաշտպանիչ՝պատրաստված է մալապատ չուգունից: - առջևի մասից դեպի բաղադրիչներ մուտք գործելու հնարավորություն: Գազօջախի նախահաշվային արժեքն է 250 000 /երկու

հարյուր հիսուբ հազար/ դրամ, իսկ շուկայական արժեքն է Ռուսաստանում 405000 / չորս հարյուր հինգ հազար/ դրամ: /Плита электрическая Kayman ПЭ-6-13-МХ/

- **55չափաբաժին՝ մսաղաց: Ըստ տեխնիկական բնութագրի մսաղացը պետք է լինի 65կգ քաշով: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև արտերկրում տեխնիկական բնութագրին համապատասխան մսաղաց գոյություն չունի: Նույնիսկ եթե հնարավոր լինի պատվիրել , չի համապատասխանի նախահաշվային գնին: Մենք ցանկացել ենք մատակարարել 35-51կգ քաշով մսաղացներ, սակայն դա չի հաստատվել ԿԳՄՍ-ի համապատասխան բաժնի կողմից:**

ԳՕՍՏ 17151-81 –ի չափորոշիչներին համապատասխան: Չափսերը՝ 515 x 232 x 565 մմ (ԵxԼxԲ) (±10%): Էլեկտրական հզորությունը 1,5 կՎտ: Արտադրողականությունը (կգ/ժ) 250 կգ/ժ, Լարումը 220Վ: Արագությունների տեսակների քանակը երկու: Հզոր և հուսալի շարժիչ հովացման ռեժիմով: Հետ պտտման ռեժիմով: Կտրիչը չժանգոտվող պողպատից 2 հատ Չժանգոտվող պողպատից ափսե-2 հատ Չժանգոտվող պողպատից տարբեր տրամաչափի ցանցեր – 5 հատ Մսաղացը ամբողջությամբ պատրաստված է 1.8 մմ հաստությամբ 18/10 AISI 304 մարկայի չժանգոտվող պողպատից: Մսի լաստիկ մղիչ: Ռետինե կարգավորվող ոտքեր: Քաշը 65 կգ: Մսաղացի նախահաշվային արժեքն է 55000 /հիսուն հինգ հազար/ դրամ, իսկ շուկայական արժեքը կշեռքի 35կգ քաշի դեպքում Ռուսաստանում արժի 250 000/ երկու հարյուր հիսուն հազար/ դրամ: / Мясорубка Торгмаш МИМ-80 /

- **57 չափաբաժին՝ սպասք լվացող սարք: Ըստ տեխնիկական բնութագրի սպասք լվացող սարքը պետք է ունենա դիմացից բացվող երկու դուռ: Տեխնիկական բնութագրին կից նկարում սարքը մեկ դռնանի է: Եվ տվյալ տեխնիկական բնութագրին համապատասխան սպասք լվացող սարք գոյություն չունի: ԿԳՄՍ-ի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցները չհաստատեցին մեր ներկայացրած մեկ դռնանի սպասք լվացող սարքը, որը ամբողջությամբ համապատասխանում էր մյուս չափորոշիչներին, նույնիսկ 720 ափսեի փոխարեն ժամում 1000 ափսե էր լվանալու:**

ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Սպասքի լվացման թվային սարք արտադրական առջևի բեռնման հնարավորությամբ: Նախատեսված է խոհանոցային պարագաներ՝ ափսեներ, բաժակներ, դանակներ և այլն լվանալու համար: Սարքը հագեցած է էլեկտրամեխանիկական հսկողությամբ: Պատրաստված է 18/10 AISI 304 մարկայի չժանգոտվող պողպատից, դիմացից բացվող երկու դռնանի: Արտաքին չափսերը՝ 600 x 625 x 1360 մմ( Լ x Խ x Բ): Արտադրողականությունը 20/30/45 զամբյուղ/ժամ: Լվացման 3ցիկլ, 720 ափսե/ժամ: Ափսեի տրամագիծը -38 սմ: Զամբյուղի, ցանցի չափսը՝ 500 x 500մմ: Զամբյուղի բարձրության կարգավորմամբ: Տաք ջրի միացման հանրավորությամբ: Պոմպը դրենաժային: Պարզաջրող նյութի դոզատոր: Ողողման և ցայման միջոցի դիսպենսեր: Հզորությունը-6.75 Կվտ: Լարում-380V 3N 50Hz: Սարքի իրական արժեքն է 1.800.000 / մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ: Կից ներկայացնում ենք արժեքը Հայաստանի շուկայում:

- **87 չափաբաժին՝ տեսակավորման դարակաշարեր: Համաձայն տեխնիկական բնութագրի տեսակավորման դարակաշարերի կմախքի հաստությունը պետք լինի 1,8մմ: Այսպիսի պրոֆիլով գոյություն չունի դարակաշարեր: Դարակաշարերը սովորաբար լինում են 1**.5մմ պրոֆիլով:

Մթերքը տեղավորելու դարակաշարի չափսերն են՝ 1600 x 1500 x400 մմ (Բ x Լ x Խ):
Տեսակը՝ հավաքովի, բաղկացած է չորս դարակաշարերից: Առավելագույն ծանրաբեռնվածությունը մեկ դարակի վրա 100 կգ է: Դարակաշարերի մետաղի նյութը՝ AISI 201 մարկայի չժանգոտվող պողպատից է, իսկ դարակներինը՝ AISI 430 մարկայի չժանգոտվող պողպատից է: Դարակի տակտեղադրվում է լրացուցիչ կապուղի-ուժեղացուցիչ, որը մեծացնում է դարակի ամրությունը: Դարակների կմախքի մետաղի հաստությունը 1,8 մմ է, դարակաշարինը՝ 1,2 մմ: Դարակաշարերը պատրաստված է 40 մմ տրամագծով պրոֆիլային խողովակից : Դարակները կարգավորվում են բարձրության վրա 50 մմ քայլերով: Անվտանգության օգտագործման համար դարակների և շրջանակի տարրերի եզրերը թեքված են: Ոտքերը կարգավորելի են ±20 մմ սահմաններում:

Հարգելի Պարոն Գևորգյան խնդրում ենք հաշվի առնել վերը նշված հանգամանքները և չկիրառել տույժեր:

Քանան Ընդ Յան ՍՊԸ-ի

Տնօրեն՝ Վ. Քանանյան